# ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ XXII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1961 թ. սեպտեմբերի 21—23-ը տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի XXII համագումարը՝ լսելով և քննարկելով ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Մ. Բաղդասարյանի զեկուցումը «ՍՄԿՊ ծրագրի նախագծի մասին» և ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Տեր-Ղազարյանցի զեկուցումը «ՍՄԿՊ Կանոնադրության նախագծի մասին», համագումարն ընդունեց համապատասխան բանաձևեր, որոնց մեջ միահամուռ կերպով և ջերմորեն հավանություն տվեց այդ պատմական փաստաթղթերին:

Այնուհետև ՀԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարոբյանը: Հաշվետու զեկուցման մեջ և համագումարի պատգամավորների ելույթներում բազմակողմանի վերլուծության ենթարկվեց մեր ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների գործունեությունը արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, գյուղատնտեսության, ժողովրդական կրթության, կուլտուրայի և գիտության բնագավառներում: Գնահատելով ձեռք բերված նվաճումներն ու հաջողությունները, համագումարը միևնույն ժամանակ բացահայտեց պարտիական, սովետական և տնտեսական օրգանների աշխատանքներում տեղ գտած թերություններն ու վրիպումները: ՀԿՊ Կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունած ընդարձակ որոշման մեջ համագումարը նշեց կոնկրետ ու գործնական միջոցառումներ, որոնց կենսագործումը կապահովի Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի հետագա բուռն զարգացումը, ժողովրդի կենսամակարդակի է՛լ ավելի բարձրացումը:

Համագումարը մեր ռեսպուբլիկայի բոլոր կոմունիստների ու աշխատավորների անունից միահամուռ հավանություն տվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությանը, մեր երկրի պաշտպանունակության և խաղաղության գործի ամրապնդման համար ձեռնարկված բոլոր միջոցառումներին:

Մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ համագումարն ընդունեց ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿՊ Կենտկոմին: Համագումարը հավաստիացրեց, որ «Հայաստանի Կոմունիստական պարտիան՝ սերտորեն համախմբված ՍՄԿՊ Կենտկոմի շուրջը, որին գլխավորում է հավատարիմ լենինյան, խաղաղության ու կոմունիզմի անխոնջ մարտիկ ընկեր Ն. Ս. Խրուշչովը, պատրաստ է այսուհետև ևս կատարել մեր մեծ պարտիայի և նրա մարտական շտաբի բոլոր առաջադրանքները, ապահովել ռեսպուբլիկայի աշխատավորների արժանավայել ներդրումը կոմունիստական շինարարության մեծ գործում»:

Համագումարը ընտրեց ՀԿՊ Կենտկոմի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմ և ՍՄԿՊ XXII համագումարի պատգամավորներ:

1961 թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ Հայաստանի Կոմպարտիայի համագումարի ընտրած Կենտրոնական Կոմիտեի պլենումը, որը ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց ընկ. Յա. Ն. Զարոբյանին: ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար ընտրվեց ընկ. Հովհ. Մ. Բաղդասարյանը: ՀԿՊ Կենտկոմի քարտուղարներ ընտրվեցին ընկ. ընկ. Գ. Ա. Տեր-Ղազարյանցը, Գ. Թ. Հարությունյանը և Մ. Ս. Մելքոնյանը:

Ա. Գ.

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԻ ՄԱՍԻՆ

*1961 թ. օգոստոսի 12-ին ՍՍՀՄ Մինիստրների Սովետը հավանություն տվեց Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի ու Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի առաջարկությանը և որոշում ընդունեց «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ շուռ տալու միջոցառումների մասին»: Այդ որոշումը Սովետական Հայաստանի էկոնոմիկայի հետագա զարգացման նկատմամբ պարտիայի ու կառավարության լենինյան հոգատարության մի նոր դրսևորումն է և համապատասխանում է մեր ռեսպուբլիկայի աշխատավորների իղձերին: ՍՍՀՄ Մինիստրների Սովետի որոշման հիման վրա հնարավոր է դառնում ձեռնամուխ լինել ռեսպուբլիկայի միակ խոշոր լեռնային բնական ջրավազանի՝ Սևանա լճի պահպանման գործնական միջոցառումների մշակմանն ու իրագործմանը և կոմպլեքսային կերպով լուծել իրիգացիայի, հիդրոէներգետիկայի հարցերը, ավելի ռացիոնալ օգտագործել Սևան-Հրազդան կասկադը՝ ինչպես ռեսպուբլիկայի կարիքների, այնպես էլ Անդրկովկասի միացյալ էներգետիկ սիստեմի կարգավորման համար:*

*Սևանի պրոբլեմի լուծման միջոցառումների կոմպլեքսում վճռական հարցերից մեկն էլ Արփա գետը դեպի Սևանա լիճը շուռ տալն է, որը հնարավորություն կստեղծի տարեկան լրացուցիչ կարգով Սևանա լիճ լցնել առնվազն 300 միլիոն խորանարդ մետր ջուր: ՍՍՀՄ Մինիստրների Սովետի որոշման իրագործման նպատակով Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետն ընդունեցին որոշում, որի մեջ շարադրված են այս հարցի լուծման գործնական միջոցառումները:*

*Ինչպես հայտնի է, Սևանի ջրերի օգտագործման նախկին սխեմայով նախատեսված էր չորացնել Մեծ Սևանը և պահպանել Փոքրը, որի մակերեսը կազմում է ամբողջ լճի 15 տոկոսը: Այդ սխեմայի իրականացումը կապված էր նաև խոշոր ծախսերի հետ, որոնք պայմանավորված են ներկայումս Մեծ Սևան թափվող գետերի տեղափոխմամբ դեպի Փոքր Սևանը, լճի ավազանում զանազան ջրահավաք կառուցվածքների անհրաժեշտությամբ, հիդրոտեխնիկական կառուցվածքները և հողային ֆոնդը լվացումներից ու ողողումներից պահպանելու, ճահճացման դեմ պայքարելու, լճամերձ գյուղերի ջրամատակարարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Այստեղ չենք խոսում այն վնասի մասին, որ կհասներ լճի ձկնային տնտեսությանը և տեղանքի կլիմային: Ներկայումս ավելի նպատակահարմար է հրաժարվել Մեծ Սևանը չորացնելու պլանից, դրա փոխարեն իրագործելով լճի ջրերի օգտագործման նոր սխեման, որի դեպքում նախատեսվում է նրա հորիզոնը պահպանել բարձր մակարդակի վրա (1896 մ. բացարձակ նիշի վրա):*

*Համառոտակի կանգ առնենք Սևանա լճի պահպանման նոր սխեմայի վրա:*

*Հետազոտությունները ցույց են տվել, որ հնարավոր է լճի դարավոր ջրային պաշարների օգտագործումը դադարեցնել լճի մակարդակի 20 մետր իջեցումից հետո՝ հաշված նրա սկզբնական մակերեսից: Ներկայումս լճի մակարդակը իջեցված է շուրջ 14 մետր: Հաշվարկները ցույց են տվել, որ իջեցումը 20 մետրի հասնելուց հետո լճից ամեն տարի կարելի է վերցնել միայն 170 մլն. խմ. ջուր: Պարզ է, որ այդ քանակի ջուրը չի կարող բավարարել ո՛չ ոռոգման, ո՛չ էլ էներգետիկայի պահանջները: Այստեղից հետևում է, որ ան-*